# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման արդյունքում ակնկալվում է ՀՀ քրեական օրենսգիրքը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, որի արդյունքում առավել կպաշտպանվեն միգրանտների իրավունքները, արդյունավետ պայքար կիրականացվի անօրինական միգրացիան կազմակերպելու դեմ, ինչպես նաև կքրեականացվի Հայաստանի Հանրապետությունում տարածված հանրորեն վտանգավոր արարքներից մեկը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը վերաբերում է *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն, որի արդյունքում առավել կպաշտպանվեն միգրանտների իրավունքները ու արդյունավետ պայքար կիրականացվի անօրինական միգրացիան կազմակերպելու դեմ* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ